ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Ավանի մսուր-մանկապարտեզներ»ր» ՀՈԱԿ-ի հ.52, հ.55, հ.56, հ.57 մսուր-մանկապարտեզ հիմնարկների ***դաստիարակների (համապատասխանաբար՝ 1,17 դրույք)***, հ. 57 մսուր-մանկապարտեզ հիմնարկի ***մեթոդիստի***՝ ղեկավարի ուսումնական գծով տեղակալի **(մեկ դրույք)**, հ.54, հ.55 մսուր-մանկապարտեզ հիմնարկների ***ֆիզկուլտուրայի հրահանգչի (համապատասխանաբար՝ 1, 0,5 դրույք)***, հ.55 և հ.54 մսուր-մանկապարտեզ հիմնարկների **լոգոպեդների** ***(համապատասխանաբար՝ մեկական դրույք)***, հ.54 մսուր-մանկապարտեզ հիմնարկի ***երաժշտության դաստիարակի (0,75 դրույք)*** թափուր հաստիքների համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում(ՁԵ1),մեկ լուսանկար 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (ՁԵ4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. մարտի 17-ից մինչև ապրիլի 11-ը **ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. **ապրիլի 15-ին՝ ժամը 10:00-ին**, «Ավանի մսուր-մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Երևան, Խուդյակովի 222: